Թափոնների բաղադրության ուսումնասիրության մեթոդաբանություն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող թափոնների բաղադրության ուսումնասիրության, արդյունքների ամփոփմանն ու վերլուծությունների իրականացման գործընթացները, դրանց արդյունավետ պլանավորումն ու իրագործումը:

2. Թափոնների բաղադրության ուսումնասիրության նպատակն է գնահատել հանրապետության բնակավայրերում առկա և գոյացող թափոնների քանակն ու որակական կազմը, ինչը հնարավորություն կտա գնահատել օգտահանման և վերամշակման ենթակա թափոնների պոտենցիալը, ինչն էլ իր հերթին կնպաստի թափոնների կառավարման ինտեգրված հնարավոր լուծումների մշակմանն ու դրանց իրագործմանը:

3. Թափոնների բաղադրության ուսումնասիրության մեթոդաբանության (այսուհետև՝ Մեթոդաբանություն) մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 464-Լ որոշմամբ հաստատված աղբահանության համակարգի ռազմավարության կիրարկումն ապահովող 2021-2023 թվականների միջոցառումների ծրագրի 3.2 կետի պահանջով և բխում է ԵՄ-ՀՀ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում (ՀԸԳՀ/CEPA) և կայուն զարգացման նպատակների «Օրակարգ 2030»-ի համատեքստում Հայաստանի Հանրապետության հանձնառություններից:

4. Մեթոդաբանությամբ նախատեսվում է տեղական մակարդակում հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ թափոնների կայուն կառավարման գործընթացի պլանավորման շրջանակներում նպաստել հանրապետությունում համակարգված թափոների վերամշակման մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև հեռացվող աղբի քանակի նվազեցմանն ու դրանց հաշվառմանը:

5. Մեթոդաբանությունը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմիններում թափոնների կառավարման ոլորտի պատասխանատուների և համապատասխան մասնագետների, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնող համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների, թափոնների

կառավարման ոլորտում (թափոնների գործածության տեսակի/ների կիրառմամբ) ծրագրեր իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմինների համապատասխան մասնագետների և պատասխանատուների համար:

6. Թափոնների բաղադրության ուսումնասիրությունը և ճշգրիտ գնահատումը հնարավոր է իրականացնել հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ նմուշառման և դրա արդյունքների վերլուծության պարագայում: Ընդ որում, աղբահանության տեղական պլանների մշակման պարագայում, նմուշառման պարբերականությունը կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ներդրման սկզբնական փուլում պետք է լինի տարվա բոլոր եղանակներին՝ թափոնների գոյացման ինտենսիվության գործոններից կախված, իսկ հետագա տարիներին կարելի է նմուշառում իրականացնել որոշակի գործոնների փոփոխությունից կախված, ավելի փոքր պարբերականությամբ:

7. Թափոնների բաղադրության ուսումնասիրությունը նախատեսում է տնային տնտեսություններում, հանրային սննդի կետերում, առևտրի և այլ կազմակերպություններում գոյացող թափոնների, ինչպես նաև սանիտարական մաքրման արդյունքներով առաջացող թափոնների բաղադրության ուսումնասիրություն, քանի որ պարտադիր չէ իրականացնել թափոնների բաղադրության ուսումնասիրություն թափոնների բոլոր տեսակների/հոսքերի մասով: Կարևոր է յուրաքանչյուր տարածքի/բնակավայրի համար հստակեցնել ուսումնասիրության ենթակա թափոնների տեսակներն ըստ անհրաժեշտության:

8. Մեթոդաբանությամբ ներկայացվում են նվազագույն ստանդարտները, որոնք կապահովեն թափոնների տեսակների գնահատման և դրանց տեսակավորման գործընթացները, որոնք ուղղված են թափոնների բաղադրության հիման վրա թափոնների առանձին տեսակների քանակի գնահատմանը:

9. Թափոնների բաղադրության ուսումնասիրությունը իրենից ներկայացնում է թափոնի որոշակի ծավալի/զանգվածի մեջ նախապես սահմանված թափոնների տեսակների կազմի ուսումնասիրություն:

II. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

10. Ուսումնասիրության պլանավորման ժամանակ հստակ սահմանվում են բաղադրության ուսումնասիրության նպատակը և խնդիրները, աշխատանքների ժամանակացույցը և բյուջեն, իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ, ներառյալ՝ ուսումնասիրությունն իրականացնող անձնակազմի անդամների՝ վարակումներից խուսափելու համար պատվաստումներ, պաշտպանիչ հանդեճանքի և այլ միջոցների ապահովում, անձնակազմի վերապատրաստում և այլն:

11. Աշխատանքների իրականացման համար կատարվում է աշխատանքային տարածքի ընտրությունը: Խորհուրդ է տրվում այն տեղակայել բնակավայրից ոչ պակաս, քան 500մ հեռավորության վրա, նպատակահարմար է աղբահանության երթուղուց և աղբավայրից ոչ մեծ հեռավորության վրա՝ տեղափոխման ծախսերը հնարավորինս կրճատելու նպատակով:

12. Աշխատանքային տարածքը պետք է լինի հարմար հարթեցված կամ հաստ բրեզենտով պատված տարածք, ինչպես նաև ապահովված լինի ծածկով/տանիքով՝ նմուշների հետ աշխատանքը արևից, քամուց և տեղումներից պաշտպանելու համար:

13. Մինչև սուսումնասիրություն իրականացնելը անհրաժեշտ է հստակեցնել տարածքի վերաբերյա տեղեկատվությունը՝ տարածքի, բնակչության թվի, սեզոնային փոփոխությունների, ընբեսվարող սուբյեկտների և սեզոնային փոփոխությունների վերաբերյալ (տեղեկատվությունն ամփոփվում է Աղյուսակ 1.1-ում:

<u>Աղյուսակ 1.1</u>

Ուսումնասիրվող տարածքի նկարագրությունը

Ուսումնասիրվող տարածքը	
Համայնք, բնակավայր, որոշակի տարածք և այլն	
Ընդհանուր տեղեկատվություն տարածքի վերաբերյալ	
Բնակելի տների քանակ, բազմաբնակարան շենքերի քնակ, բնակարանների քանակ	
Տնային տնտեսությունների քանակ	

Տնտեսվարող սուբյեկտներ, նշելով գործունեության տեսակը	
Հանրային կառույցներ և հաստատություններ	
Ընդհանուր տեղեկատվություն աղբահանության վերաբերյալ	
Հավաքվող ֆրակցիաները	
Աղբարկղերի/տարաների տեսակները	
Հավաքման հաճախականությունը	
Տեսակավորում սկզբնաղբյուրում /եթե առկա է/	
Այլ տեղեկատվություն	
Բնակչության թիվը	
Վտանգավոր թափոնների առանձնացված հավաքում	
Խոշոր եզրաչափորի աղբի հավաքում	
Սեզոնային տատանումներ	
Այլ կարևոր տեղեկատվություն	

14. Ուսումնասիրության ենթակա տարածքն անհրաժեշտ է խմբավորել ըստ «համասեռ» խմբերի (օրինակ՝ բազմաբնակարան շենքեր, անհատական բնակելի տներ, առևտրային տարածքներ, արտադրական տարածքներ, գյուղատնտեսական տարածքներ, տուրիստական գոտի և այլն)՝ հաշվի առնելով ուսումնասիրության համար սահմանված խնդիրները: Աղյուսակ 1.2 –ում նկարագրվում է ուսումնասիրության համար խմբավորման չափանիշները:

Աղյուսակ 1.2

Չափանիշները	Ցուցումներ	Նշումներ
Սեզոնայնություն	Խմբավորման ժամանակ մշտապես պետք է հաշվի առնել սեզոնայնության հանգամանքը: Թափոնների սոզոնային ուսումնասիրության դեպքում տեսակավորման արշավներ խորհուրդ է տրվում կատարել տարվա նվազագույնը երեք, իսկ հիմնականում՝ բոլոր չորս եղանակներին: Եթե թափոնների գեներացման տարբեր գործոններից կախված, որոշ եղանակների, օրինակ՝ գարնանը և աշնանը, ուսումնասիրության արդյունքները համադրելի են, ապա կարելի է այդ եղանակներից մեկը բացառել:	Տնային տնտեսությունների և առևտրային օբյեկտներից առաջացած թափոնների քանակի և կազմի սեզոնային փոփոխությունները կարող են էական լինել թափոնների ընդհանուր սեզոնային փոփոխությունների մեջ:
Բնակելի տարածքների տեսակները	Խորհուրդ է տրվում թափոնների ուսումնասիրության շրջանակներում խմբավորում իրականացնելիս հաշվի առնել բնակելի տարածքների կառուցվածքը,	Ըստ նշված առանձնահատկությունների՝ բնակելի տարածքների հիմնական տեսակներն են. • գյուղական տարածքներ,

	տեղակայվածությունը և այլ առանձնահատկություններ:	• արվարձանային տարածքներ, • կենտրոնական քաղաքային տարածքներ, • բազմաբնակարան շենք-շինություններ
Աղբարկղերի չափերը	Թափոնների ուսումնասիրության խմբավորման ժամանակ խորհուրդ է տրվում ի նկատի ունենալ մինչև 240 լիտր և 240 լիտրից ավել չափերով աղբամանները:	
Թափոնների հավաքման համակարգը	Թափոնների հավաքման տարբեր համակարգերի դեպքում հնարավոր չէ սահմանել խմբավորման հստակ չափանիշներ:	Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ տարբեր տարածքներում, թափոնների տեսակավորված և խառը հավաքման հանգամանքից կախված, դրանց կազմում կարող են էական փոփոխություններ լինել: Այդ իսկ պատճառով, թափոնների տեսակավորված և խառը հավաքման տարածքների ուրվագծումը կարող է ստրատիֆիկացիայի չափանիշների հստակեցման համար օգտակար լինել:
Թափոնների առաջացման աղբյուրը	խմբավորումը սովորաբար պետք է հաշվի առնի արդյո՞ք թափոնների առաջացման աղբյուրը տնային տնտեսությունն է, թե՞ առևտրային տարածքները (եթե հնարավոր է):	Հիմնականում բնակելի տարածքներում առաջացած թափոնը էապես տարբերվում է առևտրային գոտիներում առաջացած թափոններից:
Սոցիալ-տնտեսական ազդեցությունը	Տարբեր սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունների պարագայում հնարավոր չէ սահմանել խմբավորման հստակ չափանիշ, սակայն այս գործոնը կարող է դրսևորվել բնակելի տարածքի տեսակի չափանիշում: Այս չափանիշի ազդեցությունը կարելի է գնահատել, եթե պլանավորման համար բավարար տեղեկատվություն և ռեսուրսներ հասանելի լինեն:	
Թափոնների հավաքման օրերը	Եթե թափոնների հավաքումն իրականացվում է ամեն օր, բացի հանգստյան օրերից, ապա դա հնարավորություն կտա նաև շաբաթվա օրերի միջև թափոնների քանակի համեմատություններ կատարել: Այն դեպքում, երբ նման համեմատությունը կամ օպերատիվ տեղեկատվությունը շաբաթվա տարբեր օրերի միջև թափոնների կազմի/առաջացման էական տարբերություններ է բացահայտում, խորհուրդ է տրվում այդ օրերը ևս դիտարկել որպես խմբավորման չափանիշ:	Որոշ վայրերում բոլոր աղբարկղերից աղբը հավաքվում է շաբաթվա յուրաքանչյուր աշխատանքային օր: Այս դեպքում թափոնների կազմը և քանակը հաճախ էականորեն տարբերվում են երկուշաբթի օրերին, որը որպես կանոն, ի տարբերություն շաբաթվա մյուս օրերի, ներառում է նաև հանգստյան օերի աղբը: Այս պարագայում հավանական ստրատանները կարող են լինել երկուշաբթին և շաբաթվա որևէ աշխատանքային օր:

III. ԱՂԲԻ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ

15. Ուսումնասիրության և վերլուծության համար անհրաժեշտ աղբի քանակի/չափման միավորի որոշման համար առաջարկվում է հավաքել առնվազն 4 տ աղբ, որը համարժեք է շուրջ 45 մ^3-ին կամ 1100լ ծավալով 45 աղբարկղին):

16.Անկախ նմուշառման տարածքի չափից առաջարկվում է ըստ աղբի գոյացման սկզբնաղբյուրի ուսումասիրման ենթակա հետևյալ աղբի ծավալները.

- ✓ տնային տնեսություններից հավաքվող աղբ՝ 45 մ^3 ,
- ✓ տնային տնտեսությունների և առևտրային տարածքների խառը աղբ՝ 80 մ^3,
- ✓ առևտրային տարածքների աղբ՝ 100 մ^3 :

17. Նմուշառման ենթակա աղբը հավաքելուց անհրաժեշտ է լրացնել առնվազն հետևյալ տվյալները՝ որոնք բերված են Աղյուսակ 1.3-ում:

<u>Աղյուսակ 1.3</u>

Ենթատարածքը և մայր նմուշը

Մայր նմուշ	**Ենթատարածք**			
Անվանումը	Բազմաբնակարան շենքեր /աղբամուղներ/	Անհատական բնակելի տներ	Առևտրային տարածքներ	Եվ այլն /մասնավորեցնել ըստ անհրաժեշտության/
Անհատականացման համարը				
Նմուշառման հասցեն				
Նմուշառման աղբարկղի համարը և տեսակը				
Նմուշառման աղբարկղի լցվածության ակնադիտական գնահատականը (%-ով)				
Մյուս աղբարկղերի լցվածության ակնադիտական գնահատականը (%-ով)				
Զանգվածը /կգ/				
Տնտեսությունների քանակը				
Նմուշի կուտակման օրերի թիվը				
Նմուշառման ամսաթիվը				
Տեսակավորման ամսաթիվը				
Այլ կարևոր տեղեկատվություններ				

18. Եթե թափոնների հավաքումն իրականացվում օրական կամ շաբաթական պարբերականությամբ, ապա ցանկալի է, որ հավաքված նմուշը ներառի նվազագույնը մեկ շաբաթվա թափոն: Այն հնարավորություն կտա, որ նմուշը տեղեկատվություն կրի շաբաթվա բոլոր աշխատանքային օրերին թափոնների հավաքման ընթացքի, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին չհավաքելու պատճառով հավանական շեղումների վերաբերյալ:

19. Եթե թափոնների հավաքումն իրականացվում երկշաբաթյա պարբերականությամբ, ապա ցանկալի է, որ հավաքված նմուշը ներառի նվազագույնը երկու շաբաթվա թափոն՝ հավաքման ամբողջացակ շրջանը ներառելու համար:

20. Աշխատանքային տարածքում անհրաժշետ է ապահովել ուսումնասիրության ենթակա աղբի տեսակավորման համար անհրաժեշտ պայմանները՝ ջրամեկուսացված, հարթ տարածք՝, անձրևից ու քամուց, ինչպես նաև կենդանիների մուտքից պաշտպանված, կշեռքի և այլ գործինքերի ու սարքավորումների ու պաշտպանիիչ հագուստների առկայությոամբ (Տե՛ս Հավելված 1-ը՝ Գործիքների և սարքավորումների ցանկ):

21. Ենթանմուշների առանձնացման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հաջորդական գործողությունները՝

- խառնել մայր նմուշը անվավոր ճակատային բեռնիչով՝ թույլ չտալով նմուշի փշրում,
- նմուշը տեղադրել երկարությամբ կամ քառակուսիաձև՝ կամայական սկզբունքով. տեղադրել երկարությամբ՝ ուղիղ գծի ուղղությամբ կամ քառակուսիաձև՝ ընտրելով յուրաքանչյուր երկրորդ քառակուսին, որպեսզի ենթանմուշների միջև մեկ քառակուսիի չափով ազատ տարածք լինի,
- առանձնացնել 5 ենթանմուշ՝ յուրաքանչյուրը 100կգ զանգվածով,
- նմուշներից առանձնացնել ակնհայտ խոշոր իրերը (օրինակ՝ համակարգիչ, հեռուստացույց և այլն), որոնց նկատելի են դարձել միայն բեռնատարի կամ արկղի դատարկումից հետո,
- կշռել յուրաքանչյուր ենթանմուշը և գրանցել ցուցմունքը,

- ենթանմուշները տեղադրել կափարիչներով պլաստիկ արկղերում՝ արկղի վրա նշելով ենթանմուշի տվյալները (մայր նմուշի անվանում, ենթանմուշի անվանում և զանգված, նմուշառման ամսաթիվ և այլն),
- տեսակավորումն իրականացնել նմուշառումից հետո 1-2 օրվա ընթացքում՝ կախված տարվա եղանակից (ամռանը՝ 1 օրվա ընթացքում, ձմռանը՝ մինչև 2):

IV. ՆՄՈՒՇՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

22. Նմուշների տեսակավորման ժամանակ առաջարկվում է յուրաքանչյուր 100կգ թափոնի համար նախատեսել 6 մարդ/ժամ ծանրաբեռնվածությունը: Նմուշների տեսակավորման ժամանակ անհրաժեշտ ՝

- ✓ աշխատանքների մեկնարկից առաջ ստուգել անձնակազմի պատրաստվածությունը,
- ✓ ստուգել անձնակազմի բոլոր անդամների՝ փայտացման, պոլիոմելիտի և հեպատիտ A-ի դեմ պատվաստման հավաստումները,
- ✓ ստուգել անվտանգության կանոնների պահպանումը՝ ներառյալ պաշտպանիչ հագուստի և հիգիենայի պարագաների առկայությունը (Տե՛ս Հավելված 2-ը՝ Պաշտպանիչ հագուստի և հիգիենայի պարագաների ցանկ),
- ✓ կրկնել տեսակավորման ֆրակցիաների նկարագրությունները,
- ✓ ճշգրտել անձնակազմի անդամներից յուրաքանչյուրի դերն ու պատասխանատվությունը:

23. Ըստ անհրաժեշտության առանձնացվում են թափոնների/աղբի հետևյալ հոսքերը.

<u>Աղյուսակ 1.4</u>

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԸ

Ֆրակցիա	Ենթաֆրակցիա	Բնութագիրը	Օրինակ
Ա. Օրգանական	Ա1. Խոհանոցային թափոններ	Խոհանոցներում առաջացող բոլոր կենսաքայքայվող թափոնները	Սննդի մնացորդ, չօգտագործված սնունդ և այլն
	Ա2. Այգեգործական թափոններ	Այգիներում առաջացող բոլոր կենսաքայքայվող թափոնները	Կտրված խոտի, թփերի, ծառերի ճյուղերի մնացորդներ, էտի թափոններ, թափված միրգ, ծաղիկներ, այգու հող և այլն

	Ա3. Այլ օրգանական թափոններ	Ա1 և Ա2 ֆրակցիաներում չընդգրկված բոլոր կենսաքայքայվող թափոնները	Կենդանիների մնացորդներ, ոսկորներ, կղանք և այլն
Բ. Թուղթ և ստվարաթուղթ	Բ1.Գրասենյակային թուղթ և լրագիր	Տպված թուղթ	Թերթ, լրագիր, գիրք, բրոշյուր, գրասենյակային թուղթ, թղթե ծրար և այլն
	Բ2. Ծալքավոր ստվարաթուղթ	Ծալքավոր ստվարաթղթե փաթեթավորում	Արկղ, փաթեթավորում և այլն
	Բ3. Թղթե փաթեթավորում	Առնվազն 50% թղթից բաղկացած փաթեթավորում	Կաթնամթերքի և այլ պարենամթերքի թղթե փաթեթավորում, թղթե արկղ, պարկ և այլն
	Բ4. Այլ թուղթ և ստվարաթուղթ	Բ1, Բ2 և Բ3 ֆրակցիաներում չընդգրկված բոլոր թղթե, ստվարաթղթե թափոնները	Բացիկներ, տոմսեր և այլն
Գ. Պլաստիկներ	Գ1. Փափուկ պլաստիկե փաթեթավորում	Առնվազն 50% փափուկ պլաստիկից փաթեթավորում, որը կարող է վերածվել գնդի	Ցելոֆանե տոպրակ, ժապավեն, սննդի պլաստիկ փաթեթավորում, պլաստիկ ներդիր ունեցող ծրար և այլն
	Գ2. Կոշտ պլաստիկե փաթեթավորում	Առնվազն 50% խիտ պլաստիկ պարունակով փաթեթավորում, որը կարող է ծռվել և կոտրվել	Պլաստիկ շիշ, պահածոյի տարա, սկուտեղ, կափարիչ, դեզոդորանտների շիշ, խմելու ձողիկ և այլն
	Գ3. Փրփրապլաստ	Առնվազն 50% փրփրապլաստից բաղկացած փաթեթավորում	Արագ պատրաստվող սննդի տարա, սկուտեղ, սարքավորումների պաշտպանիչ փրփուր և այլն
	Գ4. Այլ պլաստիկներ	Ոչ փաթեթավորման փափուկ և կոշտ պլաստիկ	Խաղալիք, ատամի խոզանակ, DVD սկավառակ, պլաստիկ քարտ, գրիչ, պլաստիկ ֆայլ, մեկանգամյա օգտագործման սպասք և այլն
Դ. Ապակի	Դ1. Ապակե փաթեթավորում	Առնվազն 50% ապակի պարունակող փաթեթավորում	Ապակե շիշ և տարա
	Դ2. Այլ ապակի	Փաթեթավորում չհամարվող ապակե թափոններ	Բաժակ, հայելու և պատուհանի ապակի, ծաղկման, զարդ և այլն
Ե. Մետաղներ	Ե1. Մետաղական փաթեթավորում	Առնվազն 50% մետաղ պարունակող փաթեթավորում (ծռելու դեպքում կմնա ծալված՝ ի տարբերություն պլաստիկի)	Պահածոյի տարա, շիշ, սկուտեղ, խողովակ, կափարիչ, ալյումինե թիթեղ, դատարկ շիշ (սփրեյ), դատարկ և չոր ներկի տարա և այլն

	Ե2. Այլ մետաղներ	Փաթեթավորման համար չնախատեսված մետաղական իրեր	Պտուտակ, մեխ, սպասք, թավա, սննդի մեկանգամյա օգտագործման փաթեթ և այլն
Զ. Վտանգավոր թափոններ	Վտանգավոր թափոններ	Թունավոր, պայթյունավտանգ, քայքայվող թափոն, դյուրավառ, շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ վարակիչ այլ թափոն	Ներարկիչներ, սուր կտրող առարկաներ, դեղ, արյունոտ թափոն, ներկեր, սոսինձ, ներկի տարա, վառելիք և լուծիչներ, օգտագործված շարժիչի յուղ, յուղի ֆիլտր, մաքրող նյութեր, սնդիկ պարունակող առարկաներ, կենդանիներին վանելու համար նախատեսված քիմիական նյութեր, լաք, փչող շիշ (սփրեյ) իր պարունակությամբ և այլն
Է. Էլեկտրական և էլեկտրոնայի թափոններ	Էլեկտրական և էլեկտրոնայի թափոններ	Մարտկոցների կամ էլեկտրական ցանցին միացվող առարկաներ	Մարտկոց, սնուցող սարք, հրդեհի դետեկտոր, խոհանոցային տեխնիկա, էլեկտրական խաղալիք, էլեկտրական սափրիչ, մազերի հարդարիչ, լյումինեսցենտային խողովակ, բոլոր տեսակի լամպեր, հեռախոս, համակարգիչ, հեռուստացույցի վահանակ և այլն
Ը. Այլ թափոններ	Մասնավորեցնել, եթե զգալի է ընդհանուրի կազմում	Փայտ, տեքստիլ և այլն	Կախիչ, փայտյա խաղալիք, շշի խցան, հագուստ, կտորներ, սրբիչ, վարագույր և այլն

24. Նմուշների տեսակավորման ժամանակ յուրաքանչյուր մայր նմուշի համար նախապատրաստվում է տվյալների գրանցման առանձին թերթիկ, որին կցվում է նմուշի անհատականացման համարը:

25. Յուրաքանչյուր նմուշի արկղի լցվածությունը (%-ով) նշվում է: Մայր նմուշը կշռվում է +/- 0.1 կգ ճշգրտությամբ, ցուցանիշը գրանցվում է:

26. Յուրաքանչյուր ենթանմուշ պետք է տեսակավորել առանձին, տեղադրել համապատասխան քանակությամ աղբ սեղանի վրա, բացել փաթեթները, եթե այդպիսիք կան, ուսումնասիրել աղբի պարունակությունն ու խնամքով տարածել սեղանի մակերևույթով՝ ներառելով ամբողջ աղբը,

- նախապես առանձնացնել բոլոր ակնհայտ կտրող, ծակող, սուր գործիքները (ասեղ, ներարկիչ, դանակ, ածելի և այլն), ինչպես նաև վտանգավոր նյութերն ու իրերը (բժշկական թափոն, կոծողների դեմ պայքարի քիմիական նյութեր և այլն),
- զենք, զինամթերք հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է տեղեկացնել իրավապահ մարմիններին,
- առանձնացնել ֆրակցիաներ և ենթաֆրակցիաներ՝ ղեկավարվելով Աղյուսակ 1.3-ում ներկայացված բնութագրերով, միաժամանակ չսահմանափակվելով դրանում նշված ֆրակցիաներով՝ ելնելով ուսումնասիրության առանձնահատկություններից, սահմանված նպատակներից և խնդիրներից (օրինակ՝ վտանգավոր թափոնների բաղադրության ուսումնասիրության դեպքում անհրաժեշտ է վերանայել «Զ. Վտանգավոր թափոններ» ֆրակցիան)՝ տեղադրել նախապես լավ մաքրված աղբամաններում կամ պարկերում (ավազի կամ սուրճի մրուրի նման մանրահատիկ տարրերը խմբավորել միասին, սեղանը մաքրել խոզանակով):
- սննդի մնացորդներն անհրաժեշտ է հանել փաթեթավորումից և տեղադրել «խոհանոցային թափոն» ֆրակցիայում, իսկ մաքուր փաթեթվածքը՝ համապատասխան ենթաֆրակցիայում՝ թուղթ, մետաղ, պլաստի և այլն: Սննդի չբացված տարաները պետք է տեղադրել «խոհանոցային թափոն» ենթաֆրակցիայում,
- հավանական վտանգավոր համարվող հեղուկ կամ ներկեր պարունակող փաթեթավորումներն առանց բացելու տեղադրել «վտանգավոր թափոն» ֆրակցիայում,
- հեղուկ սնունդ պարունակող շշերը և պահածոյի տուփերն անհրաժեշտ է դատարկել «խոհանոցային թափոն» ենթաֆրակցիայում (բացառությամբ ջրի): Նշված ֆրակցիայում չափից ավել հեղուկ չտեղադրելու համար, կարելի է հեղուկը նախապես կշռել, ցուցմունքը գրանցել և հեռացնել /թափել/,
- բոլոր մանր առարկաները պետք է առանձնացնել և տեղադրել համապատասխան ֆրակցիայում, օրինակ՝ ծխախոտի մնացորդ, ամրակ, կոճակ, մարտկոց և այլն,

- լուսանկարել աշխատանքի ընթացքը և առանձնացված ֆրակցիաները/ենթաֆրակցիաները, որոնք կօգտագործվեն հաշվետվություն կազմելու համար,
- տեսակավորումից հետո կշռել բոլոր ենթաֆրակցիաները և ցուցմունքները լրացնել Տեղեկատվական թերթիկում՝ համաձայն Աղյուսակ 1.5-ում բերված ձևանմուշի:

Աղյուսակ 1.5

Տեղեկատվական թերթիկ

Մայր նմուշի առանձնացման ամսաթիվ ----------	Տեսակավորման ամսաթիվ ----------
Մայր նմուշի անվանում ----------	Ենթանմուշի անվանումը համարը ------
Ենթանմուշների քանակը ----------	Ենթանմուշների քաշը ----------

Տեսակավորման արդյունքները

Ֆրակցիա	Ենթաֆրակցիա	Քաշը (կգ)	Նշումներ
Ա. Օրգանական	Ա1. Խոհանոցային թափոններ		
	Ա2. Այգեգործական թափոններ		
	Ա3. Այլ օրգանական թափոններ		
Բ. Թուղթ և ստվարաթուղթ	Բ1.Գրասենյակային թուղթ և լրագիր		
	Բ2. Ծալքավոր ստվարաթուղթ		
	Բ3. Թղթե փաթեթավորում		
	Բ4. Այլ թուղթ և ստվարաթուղթ		
Գ. Պլաստիկներ	Գ1. Փափուկ պլաստիկե փաթեթավորում		
	Գ2. Կոշտ պլաստիկե փաթեթավորում		
	Գ3. Փրփրապլաստ		
	Գ4. Այլ պլաստիկներ		
Դ. Ապակի	Դ1. Ապակե փաթեթավորում		
	Դ2. Այլ ապակի		
Ե. Մետաղներ	Ե1. Մետաղական փաթեթավորում		
	Ե2. Այլ մետաղներ		
Զ. Վտանգավոր թափոններ	Վտանգավոր թափոններ		
Է. Էլեկտրական և էլեկտրոնայի թափոններ	Էլեկտրական և էլեկտրոնայի թափոններ		

Ը. Այլ թափոններ	Մասնավորեցնել, եթե զգալի է ընդհանուրի կազմում		

V. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

27. Թափոնների կազմի ուսումնասիրության՝ տեսակավորման և ենթաֆրակցիաների առանձնացման ժամանակ ստացված տվյալների վերլուծության և ամփոփման համար անհրաժեշտ է՝

1) հավաքել վերլուծության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ներառյալ՝ տեսակավորման՝ նախապես հաստատված նպատակը, մեթոդաբանությունը, նմուշառման տարածքի և աղբի վերաբերյալ տեղեկատվությունը, նմուշների և տեսակավորման արդյունքում ստացված ֆրակցիաների/ենթաֆրակցիաների վերաբերյալ տեղեկատվությունը,
2) առկա տեղեկատվության հիման վրա հաշվարկել համապատասխան ցուցանիշները (դրանք գրանցվում են Գնահատման թերթիկում՝ համաձայն Աղյուսակ 1.6-ում բերված ձևանմուշի), այդ թվում՝
   - ✓ հաշվել յուրաքանչյուր ենթաֆրակցիայի տեսակարար կշիռը տվյալ ենթանմուշի մեջ՝ ֆրակցիայի զանգվածը բաժանելով ենթանմուշի զանգվածին՝ արտահայտելով %-ով,
   - ✓ հաշվել յուրաքանչյուր ենթաֆրակցիայի միջին զանգվածը՝ հաշվի առնելով բոլոր 5 ենթանմուշները,
   - ✓ հաշվել յուրաքանչյուր ենթաֆրակցիայի միջին քառակուսային շեղումը՝ հաշվի առնելով բոլոր 5 ենթանմուշները,
   - ✓ կատարել ճշգրտումներ՝ հաշվի առնելով խոնավությունը և հողը. խոնավ և հողոտ փաթեթավորմամբ պայմանավորված չափազանց մեծ կշիռների արձանագրումից

խուսափելու համար, խորհուրդ է տրվում կիրառել շվեդական պրակտիկայում օգտագործվող ճշգրտման գործակիցները, այն է՝ չոր/մաքուր զանգված ստանալու նպատակով կշռված զանգվածը բազմապատկել՝ թղթի և պլաստիկի թաթեթավորման դեպքում՝ 0,56 գործակցով, իսկ մետաղական փաթեթավորման և լրագրի դեպքում՝ 0,65 գործակցով:

3) համեմատականներ անցկացնել տեսակավորման վերլուծության այլ ցուցանիշների և նախորդ վերլուծությունների ցուցանիշների (եթե այդպիսիք առկա են) հետ,

4) վերլուծել սխալի հնարավոր պատճառները, այդ թվում՝

- ✓ վերլուծության համապատասխան տարածքի սահմանման դժվարությունները,
- ✓ արկղում ոչ պիտանի աղբի առկայությունը, օրինակ՝ խոշոր եզրաչափի կամ արդյունաբերական,
- ✓ որոշված երթուղուց շեղումը,
- ✓ նմուշի խառնումը անհրաժեշտ ձևով չիրականացնելը,
- ✓ հատուկ թափոնների էական քանակությունը, օրինակ՝ տերևներ, հող և այլն, թափոնների բաղադրության վրա սեզոնային ազդեցության առկայությունը և այլն.

5) գրել հաշվետվություն, որը կներառի բոլոր ստացված արդյունքները և փաստաթղթերը, կարևոր դիտարկումները և եզրակացությունները, ինչպես նաև հնարավոր սխալի վրա ազդող գործոնների վերաբերյալ քննարկումները և դրանց ազդեցությունը վերջնական արդյունքի վրա: Արդունքը պետք է ներկայացվի ստորև բերվող աղյուսակով, ինչպես նաև գրաֆիկական տեսքով /օրինակը բերված է գծապատկերներում/:

Աղյուսակ 1.6

Գնահատման թերթիկ

Ուսումնասիրության տարածք						Տնային տնտեսությունների թիվը						Մայր նմուշի զանգվածը /կգ/		Նշումներ
Ենթատարածք						Օրերի թիվը								
Ֆրակցիա	Ենթաֆրակցիա	Ենթանմուշ № 1		Ենթանմուշ № 2		Ենթանմուշ № 3		Ենթանմուշ № 4		Ենթանմուշ № 5		Միջին զանգվածը	Միջ. քառ. շեղում	
		կգ	%	կգ	%	կգ	%	կգ	%	կգ	%			
Ա. Օրգանական	Ա.Օրգանական, այդ թվում՝													
	Ա1. Խոհանոցային թափոններ													
	Ա2. Այգեգործական թափոններ													
	Ա3. Այլ օրգանական թափոններ													
Բ. Թուղթ և ստվարաթուղթ	Բ. Թուղթ և ստվարաթուղթ, այդ թվում՝													
	Բ1.Գրասենյակային թուղթ և լրագիր													
	Բ2. Ծալքավոր ստվարաթուղթ													
	Բ3. Թղթե փաթեթավորում													
	Բ4. Այլ թուղթ և ստվարաթուղթ													
Գ. Պլաստիկներ	Գ. Պլաստիկներ, այդ թվում՝													
	Գ1. Փափուկ պլաստիկե փաթեթավորում													
	Գ2. Կոշտ պլաստիկե փաթեթավորում													
	Գ3. Փրփրապլաստ													
	Գ4. Այլ պլաստիկներ													
Դ. Ապակի	Դ. Ապակի, այդ թվում՝													
	Դ1. Ապակե փաթեթավորում													
	Դ2. Այլ ապակի													
Ե. Մետաղներ	Ե. Մետաղներ, այդ թվում՝													
	Ե1. Մետաղական փաթեթավորում													

	Ե2. Այլ մետաղներ													
Զ. Վտանգավոր թափոններ	Զ. Վտանգավոր թափոններ, այդ թվում՝													
	Վտանգավոր թափոններ													
Է. Էլեկտրական և էլեկտրոնային թափոններ	Է. Էլեկտրական և էլեկտրոնային թափոններ, այդ թվում՝													
	Էլեկտրական և էլեկտրոնային թափոններ													
Ը. Այլ թափոններ	Ը. Այլ թափոններ, այդ թվում՝													
	Մասնավորեցնել, եթե զգալի է ընդհանուրի կազմում													

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



VI. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

28. Ուսումնասիրության ավարտից հետո անհրաժեշտ է՝

- հետագայում օգտագործելու նպատակով պահպանել չօգտագործված նյութերը, օրինակ՝ պարկեր, արկղեր և այլն,
- խնամքով մաքրել ամբողջ տարածքն ու օգտագործված սարքավորումները, գործիքները՝ մաքրող նյութերով և ջրով,
- խնամքով մաքրել հատակն ու բեռնաթափման տարածքը՝ ջրով և խոզանակով,
- համոզվել, որ աղբ և այլ մնացորդներ չեն թողնվել տարածքում:

Հավելված 1

Ցանկ

անհրաժեշտ գործիքների և սարքավորումների

- առնվազն մեկ աղբատար մեքենա՝ առնվազն 6տ տարողունակությամբ,
- անվավոր ճակատային բեռնիչ կամ համարժեք տեխնիկա՝ «մայր նմուշը» խառնելու և աշխատանքների ավարտից հետո հեռացնելու համար,
- աղբատար մեքենան կշռելու համար կշեռք,
- հարթ, ջրամեկուսացված տարածք կամ մեծ բրեզենտ (առնվազն 10x10մ չափերով), որտեղ աղբատար մեքենան կարելի է դատարկել և խառնել «մայր նմուշը»,
- տանիքով ծածկված տարածք, գերադասելի է շինություն՝ ապահովված էլեկտրականությամբ և ջրով,
- ջրակայուն, հեշտ մաքրվող սեղաններ (տեսակավորման համար)՝ յորաքանչյուր աշխատակցի համար շուրջ 2-3 մ^2 մակերեսով՝ անցքերով կամ եզրային հատվածներում հարմարեցված՝ առանձնացված ֆրակցիաները արկղի կամ պարկի մեջ հեշտությամբ տեղադրելու համար,
- էլեկտրական կշեռք՝ 0,1կգ ճշգրտությամբ,
- թղթե պարկեր և տարաներ՝ կոշտ թափոնների համար,
- պլաստիկ պարկեր՝ առնվազն 100լ տարողությամբ,
- պարաններ՝ պարկերը սեղաններին ամրացնելու համար,
- մի քանի մեծ մկրատ և սուր դանակ,
- բահեր և թիակներ,
- մագնիս՝ մետաղական մանր իրերը հեշտությամբ առանձնացնելու համար,
- մաղ՝ 10մմ չափի,
- հեռախոս՝ տեսախցիկով,
- թղթե և պլաստիկ մակերեսներին նշումներ կատարելու համար մարկերներ,
- խոնավ անձեռոցիկներ՝ ձեռքերը մաքրելու համար,
- վարակազերծիչ հեղուկներ՝ սեղանները և սարքավորումները մաքրելու համար,
- խոզանակներ, մաքրող գործվածքներ, սպասք լվացող հեղուկ,
- ավել և խոզանակ՝ հատակը և այլ մակերևույթներ մաքրելու համար:

Հավելված 2

Ցանկ

պաշտպանիչ հագուստի և հիգիենայի պարագաների

- ամբողջական արտահագուստ՝ խոնավությունից և սուր իրերից պաշտպանելու համար,
- մեկանգամյա օգտագործման ամբողջական արտահագուստ,
- ռետինե գոգնոց,
- պողպատե շերտով կոշիկներ՝ սրածայր իրերից պաշտպանելու համար,
- հաստ, պաշտպանիչ ձեռնոցներ՝ սրածայր իրերից պաշտպանելու համար,
- դիմակ կամ գազային ֆիլտրով շնչառական պաշտպանիչ միջոցներ՝ լրացուցիչ ֆիլտրերով,
- աչքերի պաշտպանիչ ակնոցներ,
- ականջների պաշտպանիչ սարքեր,
- աչքերը լվացող միջոցներ,
- ձեռքերի և դեմքի լվացման համար նախատեսված հակաբակտերիալ միջոցներ,
- առաջին բուժօգնության տուփ: